Թեւէ Աստուածաշունչը մատենք կը դատապարտէ նախանձը, սակայն ուշագրաւ է մատնանշել, որ Նոյիսիւս Ա. Գրային կարգ մը հերոսներ գերծ մնացած չեն այս սարսափելի մեղքէն։ Օրինակի համար, Սառն չկրպառ Ռաբելի հանդէպ իր տածած նախանձին յարձախարէ։ Ութելիս եւ Լիայի փոխ-յարաբերությունները կը յատկանշուին նախանձի յարատեւ մրցակցութեան զգացումներով։ Յովսէփ Գեղեցիկի կեանքը գրեթէ գուրք մը մէջ պիտի վերջանար իր եղբայրներուն անասնոճ նախանձին պատճառով։

Վարէմի իմաստուն ամակագիր Եզովբոս իր մէկ անակով պերճախօսորեն կը նկարագրէ նախանձուտ մարդ մը։ Այդ մարդուն երազի մը մէջ կը յայտնուի, թէ ինչ փափաք եւ բաղձանք ինքնը, պիտի շնորհուի իրեն մէկ պայմանով, որ իր դրացին միշտ իր ունեցածին երկու անգամը անելի պիտի ստանայ։ Այս մարդը կը տեսնուի ունեցալով փափաքը կը յայտնէ։ Փափաքը կը շնորհուի իրեն, բայց իր դրացին երկու անգամ անելի մեծ տուն մը կը ստանայ։ Ձի մը ունենալու փափաքը կը յայտնէ։ Կը տիրանայ իր փափաքին։ Կերջապէս, նախանձի մոլորեցնել կլանուած, իր դրացին բարագանձով հալ ու մաշ կը դարձնէ զինքն եւ այս անգամ փափաքը կը յայտնէ, որ իր աչքերն մէկը կուրանայ... որպէսզի իր դրացին երկու աչքերը կուրանան...

Նախանձուտ մարդը ինքն իր մեծագոյն թշնամին է, որ իր ձեռքով ինքզինքը կը կործանէ։ Ի գուր չէ, որ Ս. Գիրքը կը գրէ, «Նախանձը ոսկորներուն փտութիւն է» (Առակաց 14: 30):

3.- Բարկութիւն (Anger). Բարկութիւնը հակազդեցությունն է մեղքին կամ արտաքին վիրաւորանքի մը, վիրաւորանք մը, որ կը պատճառէ զայրոյթ, ցատում, սրդողանք։

Կան արդար ցատումներ (righteous indignations), որոնք ընդունելի են արդարացի ընդվզումներ են անարդարութեան, անիրաւութեան, չարիքի եւ մեղքի դէմ։ Հին կտակարանի մարգարէները այս տեսակ բարկութիւն ցոյց տուին Իսրայելի մէջ գործուած յանցանքներուն, զանցառութեանց եւ մեղքերուն դէմ։ Մեր Տէրը՝ Յիսուս, այս տեսակ արդար ցատում ունեցաւ փարիսեցիներու, սադուկեցիներու եւ դպիրներու կեղծանորութեան եւ սնապաշտութեան դէմ։

Կան նաեւ բարկութիւններ, որոնք քանդիչ են, կործանարար եւ վնասակար։ Օրինակ, Կայեն բարկացաւ եւ իր եղբայրը՝ Աբելը սպաննեց։

Բարկութիւնը պատճառ հանդիսացած է շատ մը ամուսնութիւններու ձախողութեան, բարեկամություններու քանդումի, եկեղեցիներու եւ կազմակերպություններու մէջ ստեղծուած երկպառակութեանց։ Ահա այս նկատառումներով է, մարդիկ զգուց ըլլալու են, որ չբարկանան կամ բարկութեան պատճառ չդառնան։ Իսկ երբ արդարօրէն ընկզկին են բարկանան՝ չենդանջեն։ Այդ ուղղութեամբ առաքելային յորդորը տեղին է. «Եթէ բարկանաք, մեղք մի՛ գործեք» (Եփես. 4: 26):

4.- Ծուլութիւն (Sloth). Ծուլութիւնը ոչինչ ընելու, դատարկ կեանք մը պարելու իրավիճակ է։ Չանցառութեան մեղքն է ան։ Յիսուս իր «Երեք ծառաներուն առակ»-ին մէջ «Ծոյլ եւ չար ծառայ» կոչեց այն միատաղանդ ծառան, որ իր տաղանդը չչափարկեց, այլ գետնին մէջ պահեց։ Առակաց Գիրքին հեղինակը ծուլութիւնը «փշեղէն ցանց»-ի մը կը նմանցնէ։



«Ծոյլ մարդիկ ինքնահաճ եւ անպատասխանատու են, որոնք մարդկային ընկերության ոչ միայն նպաստ մը չեն բերեր, այլ միայն բեռ են անոր։ Ծոյլովորի Գիրքը կը նկարագրէ ծուլութեան հետեւանքները՝ հետեւեալ ձեւով. «Ծուլութեամբ շէնքը կը փլչի, եւ ձեռքերու թուլութեամբ տունը կը կայթի» (Ծոյ. 10: 18):

5.- Ազահութիւն կամ ընչացաղցութիւն (covetousness). Ազահ կամ ընչացաղց մարդը անյազ եւ անկըշտում մէկն է։ Անոր կեանքի փիլիսոփայութիւնը սա է. «Պիտի դիզեմ հարստութեանս վրայ, որքան որ կըրնամ. ի պահանջել հարկին՝ պիտի շատցնեմ ունեցածս ուրիշներ շահագործելով եւ ունեցածս բան մը պիտի չտամ ուրիշին»։ Ազահ մարդը ծակաչք եւ դրամապաշտ է։ Իր ունեցածը եւ իր դիզածը իրեն կուռք կամ պաշտամունքի առարկայ դարձուցած է։ Այսպիսի մարդոց ակնարկելով՝ Պողոս առաքել կը գրէ. «Իրենց ազահութիւնը կռապաշտութիւն է» (Եփես. 5: 5):

Փռիկոյի Սիդոս թագաւորին առաքելակա պատմութիւնը պերճախօսորէն կը բացատրէ ազահութեան ահաւոր հետեւանքները։ Ըստ ասանդութեան, չաստուածները Սիդոսին յայտնեցին, թէ այս աշխարհի վրայ ինչ որ փափաքէր, իրեն պիտի շնորհէին։ Սիդոս ցանկաց գերբնական կարողութիւն ունենալ, որ որեւէ նիւթի դիպելով՝ զայն ոսկի դարձըներ։ Այդ կարողութիւնը տրուեցաւ իրեն։ Ան հարստացաւ իր բաղձանքէն շատ անելի։ Բայց անթիւ եւ ծարաւ մեծաւ, որովհետեւ ինչ բանի որ դպաւ, ոսկիի վերածուցաւ, ինչպէս՝ իր ունեցիլը կերակուրը եւ խմելիքը ջուրը։

Այս անանական պատմութիւնը կեանքի գեղեցիկ առակ մըն է։ Երբիսն տեսնեն մարդոց խելահեղ արշաւը, դրամապաշտութիւնը, ազահութիւնն ու ընչացաղցութիւնը քանդիչ գլանի մը պէս կրնան կործանել մարդիկը։

6.- Որկրամոլութիւն (Gluttony). Բարդ բառ մըն է՝ կազմուած որկոր (կրկոր) եւ մոլորութիւն բառերէն։ Որկրամոլութիւնը չափազանց ուտելու անյազ ցանկութիւնն է։ Որկրամոլը ինքզինքն հիւանդ ընելու ստիպած շատակեր անձ մըն է. մէկը, որ կ'ապրի սոսկ ուտելու համար, եւ որուն ստամոքսը իր աստուածն է։ Որկրամոլ մարդուն փիլիսոփայութիւնն է՝ «Կէր, խմմէ, ուրախացիր, քանզի վաղը պիտի մեռնիս»։ Որկրամոլը իր ակրամոլութեամբ իր գերեզմանը կը փորէ։ Ան իր մարմնը կը փճացնէ իր անվերջ շատակերութեամբ՝ մոռնալով, որ ան Աստուծոյ տաճարն է։

Աստուածաշունչին մէջ արդատ Ղազարոսի պատմութեան մէջ յիշուած մեծատուրը, որ ամեն օր «փառահեղ խրախոսանք կը սարբեր», (Ղուկ. 16: 19 - 31) նմուշն է որկրամոլ եւ անձնակերոն մարդուն, ինչպէս, որ որկրամոլը Շարքան հայոց ասանդական պատմութեան դասական օրինակն է։

7.- Բղջարխոյութիւն (Lust or Impurity). Բղջարխոյութիւնը մարմնական ցանկութիւններու անձնատուր ըլլալու մեղքն է։ Բղջարխո ահաւոր ցանկանքներ, տափասեր անձ մըն է, որուն միտքն ու հոգին կլանուած են աղտոտ խորհուրդներով եւ ցոփ ու շուայտ մտածումներով։ Ան իր մարմնի կիրքերուն գերին դարձած է։

Հին ուխտի մէջ Առակաց Գիրքը բղջարխոյութեան գոհ եղող մարդը կը նմանցնէ «պատժուելու զացող կապուած յիմարի մը» (Առակ. 7: 22), «կրակի կայծերու վրայ քալող» մէկու մը (6: 27), «Իր անձը փճացունող» մէկու մը, որ վերք եւ անարգանք կը գտնէ» (6: 32):

Այս տեսակ կեանք մը կը վարեր Օգոստինոս։ Բայց օր մը Աստուած պատասխանեց Օգոստինոսի մօր՝ Մոնիքայի աղօթքին՝ իր զակի պապաշարութեան ի խնդիր։ Իր դրացինի պարտզին առանձնութեան մէջ, կարծես երկինքէն եկած երկու հնչիւն սա բառերով Tolle lege (որ կը թարգմանուի՝ «Ա՛ն եւ կարդա»)։ Ամոխջապէս իր տուն գնաց ու Աստուածաշունչը բացաւ եւ առաջին համարը որ իր աչքին զարկաւ Պողոս առաքելի իռմայեցիներուն գրած թուղթին 13-րդ գլխուն 13-րդ համարը եղաւ. «Վայելչութեամբ ընթանանք, ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն՝ փոխանակ անառկութեամբ, արբեցողութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ»։ Իր կեանքը նկարագրող այս լցիկն իսթեքն ենք, յաջորդ համարին մէջ՝ Ռոմ. 13: 14-ի մէջ շարունակեց կարող իր կեանքի դարձակետ ըլլալու սահմանուած պատգամը. «Տէր Յիսուս Զրիստոսի նկարագիրը ձեռ վրայ առէ»։

Ահաւասիկ՝ եթոթ մահացու մոլորութիւնը կամ մեղքեր, որոնք ոչ միայն Աստուծոյ աչքին հանդէ չեն երելիք եւ Անոր ու մարդոց միջեւ մեծ խրամատ մը կը ստեղծեն, այլ մարդոց կեանքը կը քայքայեն։

Բայց Աստուած պատրաստ է ներելու մարդոց Տէր Յիսուս Զրիստոսի փրկարար եւ քուսարար սիրով։ առաքելային խօսքով՝ «Մեղքին վարձատրութիւնը մահ է, բայց Աստուծոյ շնորհը յախտեմական կեանք է, Յիսուս Զրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով» (Ռոմ. 6: 23):



Մարիան Արքիամեանը եւ Լեւոն Պատմաբանը երկու երիտասարդ հայորդիներ են, որոնք հայկական ընտանիք-տուն կազմած են Հայաստանէն դուրս՝ Սկովտիոյ Կլասքօ քաղաքը։ Մարիանան երիտասարդ երաժիշտ-դաշնակահար է, որ իր ուսումը նախ ստացած է Նորվեգիոյ մէջ, 2014-2016 տարիներուն, ապա հասած է Կլասքօ եւ ստացած մագիստրոսի վկայականը՝ իբրեւ ընկերակցող դաշնակահար։ Ան ապա անելի կատարելագործած է իր ուսումը, երբ վերջերս ստացած է դոկտորական վկայականը՝ Նոյն մասնագիտութեան մէջ։

Փետրուար 2024, Սկովտիա։ Կը գրուցէր այս երիտասարդ գոյզին հետ, որոնք կեանքին կը նային իբրեւ խոստմալից հայրէր՝ բարձր խտեւոլով եւ լաւագոյնին ճշտելու կամբով։ Ինչպէ՛ս չունենալ իտեալ եւ կամք, երբ հայեր են՝ եւսած Հայաստանէն, եւ Մարիանային իսկ վկայութեամբ՝ «Հայաստանը ամեն ինչ է»։

«Ընտանիքին նախաձեռնը հայրենասեր եղած են եւ մեզի փոխանցեցին ազգային ինքնութիւն ու մայրենի լեզու, որպէսզի խօսինք եւ գրենք հայերէն», ըսաւ Մարիանան։ Երիտասարդ երաժիշտը ոչ մէկ ճիգ կը ինչպէս, որպէսզի հայկական երաժիշտութիւնը ներկայացնէ օտարին։ Ան երկու անգամ՝ 2018 եւ 2019 թուականներուն, նուազած է Զարկ իշխանին (այժմ՝ թագաւոր) ներկայութեան, երբ մեկնաբանած է Կոմիտասի «Ծիրանի ծառ»-ը։ Մարիանային երիտասարդ տաղանդը չէ սահմանափակուած միայն Սկովտիոյ մէջ։ Ան եղած է Պուլեմոս Արմեն եւ Լոնտոն, ուր մասնակցած է հաւաքական համերգներու եւ ներկայացուցած է հայկական ու օտար յորինումներ։

«Հայկական մշակոյթը մեր ուժն է եւ մեր շարժիչը», ըսաւ Մարիանան։ Ան այս մշակութային խիզախութեամբ «օտար» կենսեցրու մէջ, եւ եթէ հաստատ քայլերով յառաջ կ'ուզէ երթալ, բայց Նոյնքան նաեւ հայը եւ անոր մշակոյթը կ'ուզէ ներկայացնել։ Հոս տեսայ հայ երիտասարդուհին, որ չի բաւակաւանար միայն իր անձնական յաջողութիւնները կերտելով։ Ան կը գիտակցի հայուն յաջողութեան եւ կ'ուզէ իր բաժինը բերել այս գործընթացին մէջ։ «Հայութիւնը իմ մէջ է», ըսաւ Մարիանան։ - Ես հպարտ եմ իմ ազգանունով եւ միշտ այ տեսած եմ, որ հայ ըլլալը բազմաթիւ յաջողութիւններ բերած է ինձի»։

Մարիանան մասունքի նման կը պահէ իր հայկական անձնագիրը։ «Ես կ'ուզեմ պահել գայլ, Նոյիսիկ երբ ուրիշ քաղաքացիներու պէ ստանամ»։ Մարիանան երախտապարտ հայն ու հայաստանի քաղաքացին է։ «Իբրեւ երաժիշտ՝ իմ կատարելագործումս կատարեցի Հայաստանէն դուրս, բայց իմ մասնագիտութեանս հիմքը դրուած է Հայաստանի մէջ», ըսաւ Մարիանան։

Հուշագրաւ Մարիանային գոհունակութիւնը եւ արժեւորումը։ «Ես սորվեցայ լաւագոյն դասախօսներէն Արմեն Բաբախանեանի շունչին տակ, ըսաւ ան. եւ կ'ուզեմ իմ կատարելագործումս անելի աշխուժացնել Հայաստանի համար»։

Մարիանան յստակ ըրաւ, որ քաղաքական գործիչ չէ։ Այդ մէկը շատ ակընդայտ էր, քանի կը գրուցէր երիտասարդ դաշնակահար-արուեստագետի մը հետ, որուն սիրտը կը տրոփէ հայուն մշակոյթով։ Սրտի տրոփումներուն մէջէն դուրս կը հաներ իր տաղանդը, որ յստակ կերպով կ'արտացոլար մատնետուն եւ դաշնակին հետ ու անոր վրայ ստեղծուած արուեստով եւ երաժշտութեամբ։

Սակայն Մարիանան ունի տեսալեւտ Հայաստանի իրադարձություններուն վերաբերեալ։ «Կը ցանկամ Հայաստանի կառավարող ուժի հասունութիւնը տեսնել, որովհետեւ մեզի պէտք է հայոց պատմութեան այս ամօթալի էջէն շտապ վերականգնելի եւ շտկել մեր մէջքը», ըսաւ Մարիանան։ - Այս կըրնանք ընել՝ ճիշտ դեկավարութիւն մը ստեղծելով եւ միասնական ջանքերով»։

Մարիանան կը տեսնէ Հայ եկեղեցւոյ ուժը եւ իր հաւատայ։ «Ես կը հաւատամ միասնականութեան, որ կը ստեղծուի եկեղեցւոյ շուրջ», շարունակեց Մարիանան։ «Իբրեւ հայ իմ ուժս

կը ստանամ հայկական եկեղեցիներ, եւ եկեղեցւոյ շուրջ պէտք է համախմբուինք»։ Մարիանան իմ առջեւ դրաւ իր երազ-փափաքը։ «Կ'ուզեմ տեսնել, որ օր մը Սկովտիոյ մէջ հայկական եկեղեցի մը ունենանք»։

Այսօր Սկովտիոյ մէջ կ'ապրին մօտաւորապէս երեսուն հայեր։ Մեծ թէ փոքր թիւով հայորդիներ՝ բոլորն ալ պէտք ունին հայկական շունչին, որ հայուն պիտի տայ ապահովութիւն եւ վստահութիւն։

Լեւոնը հանդարտ կերպով կը հետեւեր մեր խօսակցութեան։ Ան համապատասխանեց իր համակարգիչներու ապահովական ցանցեր իրագործելու մասնագիտութեան եւ աշխատանքներուն մէջ



Է։ Կը սիրէ իր մասնագիտութիւնը։ 2000 թուականէն Լեւոն կ'ապրի Սկովտիա։ Բայց այդ երկար տարիներու սփիւռքէն կեանքը Լեւոնին համար աշխարհագրական եւ ֆիզիքական բնակութեան եղած է միայն։ Լեւոնի հոգին եւ ներաշխարհը Հայաստանն է։ «Հայաստանը իմ ծննդավայրն է։ Աշխատանքի համար այս երկիրները եկանք։ Եթէ պայմանները լաւ ըլլան, կ'ուզեմ վերադառնալ Հայաստան։ Մեր տունն է, մեր լեզունն է», ըսաւ Լեւոն։

Լեւոնը կը փառաբար, բայց նաեւ կ'ապրի հայկական ու հայուն կենցաղը։ «Հայ ըլլալը ընկերներու վստահիլ է, զանոնք սիրել է։ Ընկերներ եւ ընտանիք կապը տարբեր է հայութեան մէջ», ըսաւ Լեւոն։

Մարիանան եւ Լեւոնը Նոյնքան կ'ապրին հայուն՝ իրենց ցաղը՝ Տեղապաւնութիւնը։ «Կոմիտաս վարդապետը շատ յորիսումներ ունի Տեղապաւնութեան հոգին մտադրուցողը, եւ ես զանոնք կ'արտայայտեմ իմ արուեստիս ընդմէջէն», ըսաւ Մարիանան։ - Մեզ գրկեցին մեր հողէն ու մեր պատմութեան, եւ մենք դարձանք սփիւռք։ Բայց մենք վճռած ենք, որ պիտի պահեմք մեր ինքնութիւնը», եղաւ Մարիանայի ինքնավստահ հաստատումը։

«Մեզ փորձեցին վերացնել, բայց երբեք չյաջողեցան», եղաւ Լեւոնի մասնակցութիւնը մեր խօսակցութեան։ «Հայ ազգը միասնական պէտք է ըլլայ, որպէսզի գիրար պահենք, եւ Նոյն պատմութիւնը դարձեալ չկրկնուի», ըսաւ Լեւոն։

Մարիանան եւ Լեւոնը նաեւ կ'ապրին Արցախի կորուստը եւ անոր ցաւը։ «Շատ ցաւ կ'ապրիմ, ըսաւ Լեւոն։ «Առանց Արցախի՝ Հայաստանը թերի է», անելցուց Մարիանան։

Լեւոնը Եռաբլուր չէ եղած, բայց Սկովտիայէն կ'ապրի անոր մռայլութիւնը։ «Եռաբլուրը մռայլ իրականութիւն է։ Հայը պէտք է վերացնէ այս մռայլութիւնը», ըսաւ ան։

Հայաստանի «Ալաշկերտ» ֆութպոլի խումբը Կլասքոյի մէջ խաղած եւ տեղական Սեփիթ խումբին դէմ, եւ այդ երկու պայմաններու միջադէպներու խաղացանկի ծիրին մէջ։ Անելի քան 60.000 հանդիսատեսներու մէջ հոս էին նաեւ հինգ հայեր։ Եւ այդ հինգ հայերուն շարքին էին Մարիանան ու Լեւոնը։ «Հինգ հայերով վեց հայկական դրօշակներ բարձրացուցինք», ըսին Լեւոնը եւ Մարիանան։ - Անկախ անկէ, որ հայկական խումբը պարտուեցաւ, մենք հայկական դրօշակը բարձր պահեցինք»։

ԻՆՉԻ ԿԸ ԾԱՌԱՅԵՆ ԱՅՍ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱԿՆՈՑՆԵՐԸ

Անոնց տարրինակ ակնոցներ չեն, այլ՝ համակարգիչի նոր տեսակ մը: «Վիժըն փրօ ափըլ» ամերիկեան հաստատութեան վերջին գիտն է: Այժմ ան կը գտնուի միայն Միացեալ Նահանգներու շուկային վրայ: Կարելի է գայն երեսին վրայ դնել ձիւնի ակնոցներու նման... սակայն ո՛չ շուրջը դիտելու համար: «Վիժըն փրօ» Միացեալ Նահանգներու մէջ շուկայ իջաւ երկու փետրուարին, եւ այս նոր համակարգիչէն, որ անուանուեցաւ «խառն իրականութեան քսաք», արդէն ծախուեցաւ աւելի քան 200 հազար օրինակ:




«Վիժըն փրօ»-ի ակնոցին ետեւը գոյութիւն ունին 2 պատառներ, իւրաքանչիւր աչքի համար՝ մէկ պատառ: Անոնք կարելիութիւնը



կու տան տեսնելու իսկական աշխարհը, որուն վրայ կ'աւելցուին տեսողական (վիրշուալ) տարրեր, ինչպէս՝ ալքըններ, գրութիւն, կերպարներ, նկարներ, ժայռաւանդներ... Մենք այն տպաւորութիւնը կ'ունենանք, որ անոնք իսկապէս գոյութիւն ունին մեր շուրջ: Այս երեսոյթը կը կոչուի «խառն իրականութիւն»:

Այս համակարգիչը գործածելու համար մաուսի մը կարիքը չկայ: Բաժնետերեր «կ'ըմբռնեն» աչքերուն եւ ձեռքերուն շարժումները: Այս ձեւով, ալքընի մը վրայ սեղմելու համար կը բաւէ միայն անոր նայիլ եւ մատնեով գայն «սեղմել»:




Ֆոններով: Սակայն ապագային նոր փոփոխութիւններ (յաւելումներ) կրնան այս գործիքները անհրաժեշտ դարձնել: Ուրեմն հիմա կարգն է այդ փոփոխութիւններու աշխատանքներուն լծուելու...

Միացեալ Նահանգներու մէջ շուկայ իջնելէն ետք ամէն մարդ կը

ՎԻՏԵՕ-ԽԱՂԵՐՈՒ ԱՆԱՍՈՒՆ ԱԽՈՑԵԱՆՆԵՐ

Միայն մարդ արարածները չեն, որոնք մեծ հետաքրքրութիւն ունին եւ կապուած են վիտէօ-խաղերուն: Միացեալ Նահանգներու մէջ անասուններն ալ ունին իրենց յատուկ վիտէօ-խաղերը: Այս ձեւով, մրցանքի մը ընթացքին շիպա ինու տեսակն շուն մը՝ Փիւնթ Պաթըր, կրցաւ յաղթել ճայրոմայթ խաղին մէջ: Շան տերը անոր ուղղութիւններ կու տար փոքրիկ ուտելիքներով եւ փաղաքշանքներով, իսկ շունը պէտք էր սեղմըր յատուկ գործիքի մը կոճակներուն վրայ՝ պատահաւոր վրայ իր կերպարը պատկերելու համար:




Ետք կրցաւ վերջապէս յաղթել Էստերի Վիշապին եւ վերջացնել մայնքրաֆթի իր խաղը: Իւրաքանչիւր յա-

ջող շարժումի անոր տերը գայն կը վարձատրեր փոքրիկ ուտելիքի կտորներով:

ՄՏԱԾԵՆԸ

1.- Զարգը թուաբանական չէ, այլ՝ տրամաբանական: Եթէ.
1 = 5, 2 = 10, 3 = 15, 4 = 20, 5 = ...



2.- Կանաչեան ընտանիքը ունի 5 զաւակներ, 14-18 տարեկան: Ո՞վ է ամենէն մեծը:



- ա.- Տարօնը Սեւանէն աւելի մեծ է:
- բ.- Կարինէն Դանիէլէն 3 տարի աւելի փոքր է:
- գ.- Կարինէն Թալինէն աւելի փոքր է:
- դ.- Սեւանը ամենէն փոքրը չէ:
- ե.- Թալինը Տարօնէն երկու տարի աւելի մեծ է:
- զ.- Դանիէլը ամենէն մեծը չէ:

3.- Երբ տիկին Ալինին կը հարցնեն իր զաւակներուն տարիքը, ան կը պատասխանէ, որ ամենէն փոքրը կա՛մ Անին է, կա՛մ ալ Պետիկը, բայց Անին ամենէն մեծն է եթէ միայն Լեւոնը ամենէն փոքրը չէ: Կրնա՞ս գիտնալ, թէ տիկին Ալինին զաւակներուն մէջ ո՞վ ամենէն մեծն է, եւ ո՞վ՝ ամենէն փոքրը:

4.- Երէկ 4-րդ դասարանին մէջ 4 անգամ աւելի աշակերտ կար, քան՝ հիւսնդ եւ տունը մնացած աշակերտ: Այսօր մէկ աշակերտ դպրոց վերադարձաւ, հետեւաբար դասարանին մէջ ներկայ էին բացակայ աշակերտներէն 5 անգամ աւելի աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ 4-րդ դասարանին մէջ:

5.- Տէր եւ տիկին Զայրապետեանները եւ անոնց երկու զաւակները պարզ ընտանիք մը կը կազմեն: Բայց եթէ այս չորս անձերէն միայն երկուքը իրականութիւնը կ'ըսեն, կրնա՞ս ենթադրել անոնցմէ իւրաքանչիւրին անունը եւ ո՞վ ըլլաւ:

- Յովհաննէսը եւ Լեւան իրարու հետ ընտանեկան կապեր ունին:
- Երուանը Յովհաննէսէն աւելի մեծ է:
- Թալինը Երուանէն աւելի փոքր է:
- Թալինը Լեւայէն

աւելի մեծ է:
6.- Պարոն Արան կը հաստատէ, որ ինք կըրնայ ֆուտբոլի իւրաքանչիւր մրցումի արդիւնքը կռահել՝ սկսած վայրկեանին: Ինչպէ՞ս կարելի է բացատրել այս երեւոյթը:
7.- Երէկ Զրակը իր հօրմէն ստացաւ 500 տոլար, իսկ Արամը իր հօրմէն՝ 200 տոլար:



Զակառակ այս գումարներուն, այս երկու անձերը, 700 տոլարի փոխարէն, ունեցան միայն 500 տոլար: Ինչպէ՞ս կարելի է բացատրել ասիկա:

8.- Պր. Կանաչեան, պր.Պետիկեան եւ պր. Մարկոսեան մանկութեան ընկերներ են: Անոնց-




մէ մէկը բժիշկ է, միւսը փաստաբան, իսկ երրորդը՝ ուսուցիչ: Ուսուցիչը, որ միակ զաւակ է, ամենէն քիչ ամսականը ունի: Պր. Մարկոսեանը, որ ամուսնացած է պր. Կանաչեանի քրոջ հետ, բժիշկէն աւելի բարձր ամսական ունի: Կրնա՞ս գիտնալ իւրաքանչիւրին արհեստը:


9.- Խնձորենիի պարտեզի մը ծառերը վարակեցան վնասակար մանրէով մը: Ամէն օր նախորդ օրէն երկու անգամ աւելի ծառեր կը վարակուէին: 6-րդ օրը պարտեզին բոլոր ծառերը վարակուած էին: Զանի՞ օրէն պարտեզին կէտը վարակուած էր:

Պատասխանները էջ 6

ԺԱՄԱՆՑ




Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



7



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 7 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր կտորի համապատասխանող տեղը:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած առարկաները:

ԱՂԵՂՆԱԲԱՌ - 147

Table with 7 columns: Ընտանիքի անդամ, Ոչ միայն հացը սպիտակ... կորիզաբարձի ընդդիմացիկ, Վիշտ, Անտակն հավանել, Ռեմոն, արքուն, Բրիտանացի սայրի երգիչ Էրգասան

ԱՂԵՂՆԱԲԱՌ ԹԻԻ 146-Ի ԼՈՒԾՈՒՄ

Table with 10 columns: Ե. դարը հայ պատմագիր, Փ, Հայկ. գազար, Յ, Ստորին, գեղիկ, Տ, Չմուտք մարմն, Մ, Կախտ, կերտմ, Ա, Իզական օտար ստան


«ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇԱԿԸ...»
Շարունակում 4-րդ էջին

Կը նայի այս հայ երիտասարդ զոյգի դեմքերուն եւ կը հրճուէի՝ տեսնելով անոնց հպարտութիւնը: Երիտասարդ հայերու հպարտութիւնը: Հպարտութիւնը, որ կը լեցնէր եւ կը լիցքատրէր անոնց կեանքերը՝ սփռուած այս մէկ ծայրամասին մէջ: Անոնք հայկական դրօշակը բարձր պահելով՝ նաեւ բարձր կը պահէն իրենց ինքնութիւնը, մշակոյթը, լեզուն եւ հաւատքը: Ու տակաւին... Հայաստանը:
Հայուն պատմութեան այս դժուար եւ բախտորոշ օրերու ժամանակահատուածին մէջ հայը պետք ունի իր հայկական դրօշակը բարձր պահելու: Դրօշակը բարձր պահելով՝ բարձր կը պահենք մեր հպարտութիւնը, նոյնիսկ երբ ճգնուած ենք: Ու տակաւին, երբ յուսահատ ու յուսախաբ ենք: Եւ երեւի՝ կոտորած:
Եթէ որոշած ենք դուրս գալ այս իրավիճակէն, եւ անպայմանօրէն՝ այո՛, այո՛ կը նշանակէ, թէ «մեր դրօշակը բարձր պիտի պահենք»: Իսկ դրօշակը՝ իր ամբողջական հասկացողութեան մէջ: Մեր ինքնութիւնը, մեր մշակոյթը եւ լեզուն: Եւ՛ հպարտութիւնը:
Լեւոնը եւ Մարիանան՝ երիտասարդ հայորդիները, հեռուոր Սկովտիոյ մէջ բարձր կը պահեն հայկական դրօշակը: Եւ դրօշակին հետ՝ իրենց ինքնութիւնն ու մշակոյթը: Անոնք հպարտ հայեր են, որոնք չեն ուզեր յուսահատիլ:
«Հայկական դրօշակը բարձր պահեցինք»:
Մարիանան եւ Լեւոնը:
Բայց՝ ամբողջ հայութիւնը: Ես, դուն եւ իւրաքանչիւրս:
Հայուն դրօշակը՝ հայուն հպարտութիւնը բարձր պահելու պարտականութիւնը եւ անոր հետ ապրելու գրաւականը:
Փետրուար 2024

Պատրաստեց՝ Նանօր Գոյունեան-Թաշճեան

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՌ



ԳՈՐԻՉՈՆԱԿԱՆ


- 1. Կցվուր - Մա հակ:
2. Օժանդակութիւն - Իգա կան օտար անուն:
3. Մեծագին - Երախտից:
4. Քաջալերուիլ - Ձերմուկներ գտնող իշա պանը:
5. Օդ - Փոքրացնող մասիկ:
6. Կանաչի կոշտ կան բառ - Մովսէս Յարութիւնեանի գրքանունը:
7. Գոյականի հոլովներն (իսկ) - Ձրատը հա:
8. Լայն մակերես - Մոլեկուլ:
9. Դոկտի հայրը - Մուրճուած:
10. Անաստեղ կան կենդանի - Կիլիկեան Նաւահանգիստ:
11. Թանձրակեղեղ պտուղ - Ուրուական:

ՈՐՈՂԱԳԱՅԵԱՑ

- 1. Գնացը - Բորբոքում:
2. Ուտեստ - Տոմ, շոտայ:
3. Երոպական երկիր - Հայաստանի լեռներն:
4. Անագին, վիթխարի:
5. Ածականակերտ մասնիկ - Թոյլատրած - Տարածքի միատր:
6. Յորդանիո - Հաստատական պատմախան:
7. Կտուած ոգիար - Հեղուկ գրեղու վայր:
8. Լուլիքա Արաւնեանի գրքանունը - Կրկնուած տառեր - Քաճի:
9. Արական անուն - Կաթի երես:
10. Մոլն - Կուսակալութիւն:
11. Հեղուկի ընդունարան - Տոլ:

Պատրաստեց՝ Տ. Ս. ԱՂԱՉԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ



Երիզունակն եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գեղացածը բաղկացած է իւրաքանչիւրը 9 թասակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառուած սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր թասակուսի մէջ թուանշան մը գեղեղել՝ այնպէս մը, որ իրիզունակն իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 թասակուսի մէջ իւրաքանչիւր բաժին ունենայ ձեռն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Այսպէս իւրաքանչիւր շարք մը թուանշաններ իրենց չճշգրիտ թասակուսիներուն մէջ գեղեղուած են:

ՆԱԽՈՂ ԺԱՄԱՆԻ ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒԾՈՒՄԵՆԸ



ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԷԶԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1) Որովհետեւ 1=5, հետեւաբար 5=1: 2) Թալին (18), Դանիէլ (17), Տարօն (16), Սեան (15), Կարինէ (14): 3) Անին ամենէն մեծն է, իսկ Պետիկը՝ ամենէն փոքրը: 4) Երեւ, դասարանին մէջ կային 24 աշակերտներ, եւ 6 աշակերտներ բացակայ էին: Յետեւաբար 4-րդ դասարանին մէջ կայ ընդամենը 30 աշակերտ: 5) Անաջին եւ չորրորդ նախադասութիւնները ճիշդ են, որովհետեւ Յովհաննէսը եւ Թալինը Երուանդին եւ Լենային ծնողներն են: 6) 0 - 0, ասիկա իւրաքանչիւր մրցումի արդիւնքն է՝ սկսած վայրկեանին: 7) Հրակը Արամին հայրն է, ան Արամին տուա իր ստացած 500 տոլարէն 200 տոլարը: 8) Պր. Մարկոսեան բժիշկ է, պր. Կանաչեան՝ փաստաբան, իսկ պր. Պետիկեան՝ ուսուցիչ: 9) Պարտեհին ծառերուն կէտը վարակեցաւ 5 օրէն, որովհետեւ ամեն օր վարակուած ծառերուն թիւը կը կրկնապատկէր, հետեւաբար վեցերորդ օրը պարտեհին բոլոր ծառերը վարակուած էին:

ՕՐԱՏԵՏՐ

ՄԱՐՏ 2

- 1853 - Ծնունդ տրգահան, խմբավար, երաժշտագետ եւ բանաստեղծ Զրիստապոտ Կարա-Մուրզայի, Խրիմի Պելուկոսը բաղաբը: Մահացած է 1902-ին, Թիֆլիսի մէջ:
• 1918 - Զորավար Թովմաս Նազարբէկեան հայոց Ազգային Խորհուրդին կողմէ հայկական զօրքերու ընդհանուր իրամասնատար կը նշանակուի:
• 1992 - Հայաստան պաշտօնապէս մուտք կը գործէ ՄԱԿ-ի միջազգային ընտանիքէն ներս:
• 2010 - Մահ դերասան Լեւոն Իսահակեանի, Երեւանի մէջ: Ծնած էր 1908-ին, Գիւմրի:

ԼԻԲԱՆԱՆԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԼԵՈՆԱԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ԶՍԸՄ ՊՈՒՐԾ ԶԱՍՈՒՏ - ՏԱՊԸԼ ԶԻՔ



Այսօր կեսօրը ետք ժամը 15:00-ին ՅՄԸՄ Պուրծ Զամուտ մասնաճյուղի ֆուտբոլի տղոց խումբը այս տարեշրջանի իր ամենեկ կարեւոր մրցումը պիտի կատարէ Պիստոնի դաշտին վրայ:

Արդարեւ, ՅՄԸՄ Պուրծ Զամուտ - Տապըլ Զիք մրցումը պիտի ըլլայ «գազաթի մրցում», որուն յաղթականը մեծ յոյս կ'ունենայ 3-րդ դասակարգ բարձրանալու:

ՅՄԸՄ-ի մեր տղաքը, որ մեծ թիւով կոլեր կը նշանակեն, իրենց դէմ պիտի ունենան մրցակից մը, որ իր կարգին բաւական կազմակերպուած ֆուտբոլ կը կիրարկէ: Մեր տղոցմէ կը սպասուի իրաւարարի ազդանշանի սուլիչէն միւսէն աւարտ պայքարիլ ամեն գնդակի համար՝ առիթ չտալով մրցակիցին, որ հանգիստ կամ ազատ խաղայ: Կոլ-սքորըրներ ետեւէ ձամատէ եւ Սերժ Օսթեան, ինչպէս նաեւ Ալի Ֆահս իրենց խելացի շարժումներով եւ հարուածներով պիտի փորձեն ճնշել մրցակից պաշտպաններուն վրայ՝ փաստելով, որ իրենք թիւ 1 թեկնածուն են Գ. դասակարգ բարձրանալու: Միջնապահներ Էլի Փիլաճեան, Տիգրան Վարդան (Տիգր) եւ խմբապետ Ալի Յարութիւնեան պիտի փորձեն վիրաւոր Զասան Չապթերին օգնել (եթէ մաս-

նակցի անշուշտ) եւ Տապըլ Զիքի կեդրոնի գիծը անշարժացնել՝ կասեցնելով վերջեան Սոհամետ Շապայանի խելացի փոխանցումները: Պաշտպաններն ալ՝ զխաւորութեամբ Նայեֆ Զալուբի եւ Ապրտ Սոնտոսի, ինչպէս նաեւ ծայրի պաշտպաններ Յիւսէյն Պազգի եւ Ալէք Ալճեան, շատ զգուշ պետք է ըլլան մրցակիցի յարձակումներէն: Պետք է զգուշանալ նաեւ իրաւարարին սուլիչներէն, որոնք միշտ այս ձեւի մրցումներուն ճնշումի տակ կրնան ըլլալ:

Ծիշո՞ք է, որ մենք ունինք տղաք, որոնք վիրաւոր են, բայց ցաւի տակ խոյնիկ իրենց կարելին կ'ընեն ՅՄԸՄ-ի համար: Արդարեւ, խմբապետ Ալի, կոլսքորըր Եուսէֆ Զամատէ, պաշտպան Նայեֆ Զալուբի եւ միջնապահ Զասան Չապթեր (անցեալ մրցումին վերջին մասին մասնակցեցաւ) վիրաւոր են, բայց կը խաղան պայքարելով ցաւի դէմ ալ:

Զամակիրներէն կը սպասուի այսօրուան մրցումին ներկայ ըլլալ: Մասնաւոր փոխարդակառքեր ալ տրամադրուած են կէսօրուան ժամը 1:00-ին՝ Պուրծ Զամուտի իրաւարարէն գանոնք փոխադրելու Պիստոնի «Ամին Ապտելուր» դաշտ:

ԼԻԲԱՆԱՆԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ԶՍԸՄ ՊԵՅՐՈՒԹ - ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿ

Այսօր ժամը 16:00-ին, Անսարի դաշտին վրայ, ՅՄԸՄ Պեյրութի տղաքը իրենց 6-րդ մրցումը պիտի կատարեն Լիբանանեան բանակի խումբին դէմ:

Նախկին 5 մրցումներուն ՅՄԸՄ-ի տղաքը 2 յաղթանակ ու 3 պարտութիւն կրած են, եւ այս մրցումը մեր վերջին դժուար մրցումը պիտի ըլլայ, բայց, ինչպէս միշտ կը նշենք, ֆուտբոլի մէջ դժուար բան չկայ, եւ միշտ ալ երբեմն բախտը կը ժպտայ խումբի մը եւ կրնայ ըլլալ անակնկալ արդիւնք:

Յոյսով, որ ՅՄԸՄ Պեյրութի տղաքը առնուազն պայքարին մրցակիցին դէմ եւ պատուաբեր արդիւնք արձանագրեն խումբի մը դէմ, որ անցեալ շաբաթ անակնկալ պարտութիւն մը կրած էր 4 յաջորդական յաղթանակներէ ետք:

Այսօր Չամալէք Պեյրութ պիտի մրցի Անդրանիկի դէմ: Վաղը, Նուժում Պեյրութ պիտի մրցի Պեյրութ Ֆ. Բ. -ի դէմ, Տիւսամ Պեյրութ՝ Տապիլի դէմ, իսկ Նո Լիմիթը՝ Արգիի դէմ:

Մեր յաջորդ մրցակիցները պիտի ըլլան Նո Լիմիթը, Տիւսամ Պեյրութ եւ Նուժում Պեյրութ, բոլորին ալ կրնանք յաղթել:



Ստորեւ դասաւորումը՝ 6-րդ հանգրուանի մրցումներէն առաջ:

	ՎԵՏ
1.- Արգ	12 (22-5)
2.- Տապիլ	12 (14-6)
3.- Լիբանանեան բանակ	12 (14-6)
4.- Անդրանիկ	9 (16-8)
5.- Նուժում	9 (10-11)
6.- Տիւսամ Պեյրութ	7 (9-9)
7.- ՅՄԸՄ Պեյրութ	6 (11-15)
8.- Պեյրութ Ֆ. Բ.	6 (13-16)
9.- Նո Լիմիթ	1 (6-24)
10.- Չամալէք Պեյրութ	0 (3-18)

ՖՈՐՄԱՒԸ 1

ՎԵՐՇԹԱՓԸՆ ՓՈԼ ՓՈՉԻՇԸՆԻ ՎՐԱՅ

Երէկ երեկոյեան Սախերի մէջ Պահրէյնի կրն փրիի փոլ փոզիշընը շահեցաւ վերջին 3 տարիներու աշխարհի ախոյեան Մաքս Վերշթափըն, Ֆեռարիի Շարլ Լըքլերին եւ Մերսեդեսի Ծորճ Ռասըլին գերազանցելէ ետք:

Վերշթափըն 1.29.421 վայրկեան ձեռք ձգեց առաջին գոտումի շրջանին, ապա բարելաւեց 1.29.179 վայրկեանի՝ աւարտելով առաջին դիրքին վրայ: Լըքլեր 0.228 երկվայրկեան աւելի դանդաղ էր, իսկ Ռասըլ 0.306 երկվայրկեան ետ էր Վերշթափընէն: Զարլու Սայնց (Ֆեռարի) գրաւեց 4-րդ դիրքը, իսկ Ռետ Պուկի երկրորդ վարորդը՝ Սերխիօ Փերես՝ 5-րդ: Ֆեռանտո Ալոնսո (Ալթոն Մարթին) վաղը կը սկսի 6-րդ դիրքէն, մինչ Մաքլարտէի վարորդներ Լեոնո Նորիս եւ Օսքար Փիասթրի՝ 7-րդ:



Եւ 8-րդ դիրքերէն: 7 անգամ աշխարհի ախոյեան Լուիս Յամիլթըն 9-րդ դիրքէն պիտի սկսի մրցումը, իսկ գերմանացի Նիքո Յուլթենպըրկ (Ռասս)՝ 10-րդ:

ՊԱՍԵԹՊՈԼ

ՖԻՆԻՔՍ ԲՈՒՌՆ ՊԱՅՔԱՐԵ ԵՏԵ ՅԱՂԹԵՑ ԶԻՄԹԸՆԻ

Ֆինիքս Սանգ Արիզոնայի մէջ «տաք» մրցումը մը ետք կրցաւ պարտութեան մատնել Յիւսթըն Ռոքեթըն՝ 110-105 արդիւնքով:

«Օլ Սթար»-ի աստղերէն Տեյլը Պուքըր եւ Յիւսթընի ռուլի Էլե Ուիթթըր պզտիկ վեճէ մը ետք թեքնիքըլ ֆաուլեր ստացան 4-րդ մասին:

Սանգի «երկար» տղոցմէ ետուսի Նուրքիչ հասաւ օգնելու իր խմբակիցին: Պուքըր 35 կէտ նշանակեց եւ Էլեյն Տիլերնթ անցուց 24 կէտեր ի նպաստ Ֆինիքսի, որ կրցաւ «զսպել» Յիւսթընի յառաջխաղացքը 4-րդ մասին: Երկու խումբերը վաղը առաւօտեան կրկին պիտի մրցին իրարու դէմ, խոյն դաշտին վրայ:

Նուրքիչ 16 կէտ, 13 ռիպաուստ եւ 3 պլոք կատարեց 6 ֆաուլ կատարելով դուրս ելլելէ առաջ: Իր ամենէն «տաք» վայրկեանները եղան 4-րդ մասին, երբ 2 անգամ գնդակը խլելէ Ուիթթըրն՝ Ֆինիքսի համակիրներուն քաջալերանքը վայելելով:

«Շատ կարեւոր է... Այս բանը կը նշանակէ, որ խումբին անդամները իրարու կը պաշտպանեն», ըսաւ Պուքըրը:

«Ծիշո՞ք ժամանակին պետք եղածը եղաւ: Երբ մրցումը կարծրանայ, պետք է կարծր մարզիկ ունենալ օգնելու: Այդ պահուն կը գիտնաս, որ այսպիսի անձեր ունիս խումբիդ մէջ»:

Պուքըր 20 կէտ նշանակեց առաջին մասին, եւ Սանգ 12 կէտի առաւելութիւն մը ունեցաւ Յիւսթընի վրայ: Ան 6 տարբեր մրցումներու 20 կէտ կրցաւ նշանակել 1 մասի (12 վայրկեան) ընթացքին:

3 անգամ «Օլ Սթար» մրցումներու մասնակցած Պրետլի Պիլ յաջորդական 5-րդ մրցումը ըլլալով բացակայեցաւ մկանի հարցերու պատճառով:

Թեքսասի մէջ, Սան Անթոնիօ Սփըրզ 5 յաջորդական պարտութիւններ կրելէ ետք կրցաւ 132-118 արդիւնքով յաղթել Օքլահոմա Սթիթ Թանտըրի:

Ֆրանսացի 20 տարեկան ռուլի Վիքթոր Ուենպալանտ 28 կէտ եւ 12 ռիպաուստ ձեռք ձգեց եւ մրցումէն ետք բարձրախօսով համակիրներուն գոռաց՝ ցոյց տալով, թէ որքան կարօտ ունի յաղթանակ տօնելու իր համակիրներուն առջեւ: Ուենպի անցուց 7 Եիսթթ եւ 5 պլոք՝ նշանակելով 5 յաջող 3 կէտնոց կորուկներ:

Անթոնի Տեյլի 40 կէտ եւ 15 ռիպաուստ ձեռք

ԸԸԸԸՉ. «ԱՍԻԿԱ ՈՉ ԹԵ...»

«Ռուրքիոյ եւ Յայաստանի յատուկ ներկայացուցիչները կրնան Երեւանի մէջ հանդիպիլ», յայտարարած է ԸԸԸԸ: Ան Ռուսիստանին առաջարկած է յաջորդ շաբաթ հանդիպիլ Երեւանի մէջ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ԱՅՍՕՐ՝ ՌԻԱՏԻ - ՇԱՆԿԻԼ

Այսօր կը շարունակուի Լիբանանի պասեթպոլի ախոյեանութիւնը՝ 15 օրուան խաղերէ ետք, ազգային խումբի խաղերուն պատճառով:

Կեսօրէ ետք ժամը 16:45-ին Մանարայի դաշտին վրայ Ռիատի պիտի մրցի Շանկիլի դէմ: Ռիատի 2 մրցում պարտուած է այս տարեշրջանին եւ 14-րդ մրցումին պիտի փորձէ 12-րդ յաղթանակը արձանագրել Շանկիլի դէմ, ՅՄԸՄ-ի համար ալ անելի նպաստաւոր կ'ըլլայ: ՅՄԸՄ անցեալ շաբաթ ձեռք ձգած էր քանատացի սենթըր Փրիսա Իպէլ՝ փոխարինելու Էմմանուէլ Էկպուլան, որ 3 մրցումի համար եկած էր ՅՄԸՄ:



րալքը Պոլթս խումբէն եւ եղած է խմբակից Չեք Լոֆթընի:

14-րդ հանգրուանի վերջին մրցումը տեղի կ'ունենայ վաղը՝ Ըլիւպ Սանթրալի դաշտը, ուր Մեյրուպա կը հիւրընկալէ Սաժետը ժամը 19:00-ին:

15-րդ հանգրուանին ՅՄԸՄ կը հիւրընկալէ Ռիատին, չորեքշաբթի ժամը 21:45-ին, Սըզերի մէջ:

Իպէլ նախապէս խաղցած է Մե-

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՆՈՎԻ ԵՒ ԱՆՏՐԵ ՌՈՒՊԼԵԿԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԻ ԶԱՍՈՅԹԸ՝ ԱՐՑԱՆԱԳԱՅՈՒԹԵԱՆ

Հայազգի թենիսիստ Կարեն Խաչանով եւ ռուս թենիսիստ Անտրե Ռուպլեկ պիտի կատարեն բարեգործական մրցում մը, որուն հասոյթը պիտի տրամադրուի արցախահայութեան:



Նախաձեռնութեան հեղինակը ՅՄԸՄ Կլենտելի «Արարատ» մասնաճիւղն է, եւ մրցումը տեղի կ'ունենայ Լոս Անճելըսի մէջ, 16 մարտին: Կարեն Խաչանով «Էյ. Քի. Փի.»-ի թիւ 15 դասուած թենիսիստն է եւ 4 անգամ միջազգային մրցաշարքեր շահած է: Ան Ռոքիոյի 32-րդ ամառնային ողիմպիականի մրցումներու արծաթէ մետալ շահած էր:

ՀԱՃԻԷ. «ԿԸ ՄՊԱՍԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ...» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԱԾ Ա. ԷԶԵՆ

«2020-էն ետք հիմնական 5 սկզբունքներ ընտրուած էին խաղաղութեան հասնելու համար, խաղաղութեան համաձայնագրի բնագիրը պատրաստուած էր Ազրայեյճանի կողմէ եւ ներկայացուած հայկական կողմին, որ իր կարգին կը հաստատէր մեր օրակարգը»:

«Մենք պետք է հաւատարիմ մնանք Երեւանի եւ Պաքոյի միջեւ խաղաղութեան օրակարգին եւ մենք կը խօսինք Յայաստանի եւ Ազրայեյճանի մասին: Անիկա Փարիզ կամ Պրիսթըլ չէ, եւ մեր երկիրներուն միջեւ խաղաղութեան համաձայնագիրը պետք չէ այնտեղ կնքուի, այլ անհրաժեշտ է միասին աշխատիլ, որ շրջանային փոփոխութիւններու հասնիքը»:

«Մեզի համար որոշ հարցեր բաց մնացած են, եւ մենք կը սպասենք բացատրութիւններու՝ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան ու իրաւական որոշ կէտերու առնչուած: Հայաստանի Հանրապետութեան մէջ տակաւին կայ «միացում» բաղադրիչը եւ անիկա կապուած է Լեւոնայի Ղարաբաղին, որ ըստ ստոր կը մտնէ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան լիազօրութիւններու մէջ, եւ որոշ յղումներ կը կատարուին Ալմա Աթայի հռչակագրիին: Մենք հայկական կողմէն բացատրութիւններու կը սպասենք, եւ անոնք պետք է կարելի եղածին չափ շուտ տրուին», նշեց Հաճիէ:

